Դասղեկի տարեկան աշխատանքային պլան

Դպրոց՝ Երևանի Մ.Մեծարենցի անվան

հ.146 հիմնական դպրոց

Դասարան՝ 8 –րդ (ա)

Դասղեկ՝ Ս. Ռուստամյան

Հաշվի առնելով և' ժամանակակից դպրոցի սաների հետ աշխատելու դժվարությունները, և' տարիքային շրջանի հետ կապված դժվարությունները, և' դասարանի անհատական առանձնահատկությունները, որպես դասղեկ,նախընտրում եմ ,,Դասղեկի ժամ ,, դասաժամերը կոչել բարոյագիտության և կյանքի դասաժամեր:

Այդ դասաժամերի զրույցի և բանավեճերի թեմաներն ընտրելիս օգտվել եմ առակների տարբեր գրքերից, մանկավարժական ամսագրերից և այլ բարոյախրատական ստեղծագործություններից: Ավելացնեմ նաև, որ ներքևում նշված թեմաների ցուցակը միանգամայն փոփոխական է, քանի որ նպատակս է ուսումնասիրել երեխաների վարք ու բարքը և նկատված թերացումները վերացնել ու բացառել: Ընթացքում դասարանի վարքագիծը, ուսումնական առաջադիմության մակարդակը, կամ որպես աշակերտ նրանց պահվածքը կարող են նոր նպատակներ ծնել և թելադրել նոր ոճով ու թեմատիկայով աշխատանք: Իսկ այդպիսի փոփոխություններն ու նորարարությունները կարտացոլվեն դասղեկի իմ օրվա պլանում:

N	Թեման
1.	Հակահամաճարակային կանոնների պահպանումը:
2.	Կարծրատիպեր և նախապաշարմունքներ:
3.	Կաձրատիպերի առաջացման պատճառները:
4.	Հիմնավոր ընդանրացումների կատարում:
5.	Խտրականություն:

6.	Ինչ է խտրականությունը:
7.	Խտրականության տեսակները:
8.	Դ.Դեմիրճյանի “Ավելորդը”:
9.	Հ.Թումանյան “Իմ ընկեր Նեսոն”:
10.	Ա.Այվազյան”Բժիշկը,որ նախ իրեն բուժեց”:
11.	Սեռային խտրականության օրինակ “Միակ դուստրը”:
12.	Դրական խտրականության օրինակ:
13.	Հայտնի հայ մարզիկները:Ուժեղ լինել,նշանակում է...
14.	Անհատի բարեկրթությունը:
15.	Անհրաժեշտ գիտելիքներ երկրաշարժից պաշտպանվելու համար:
16.	Ամանորյա միջոցառման նախապատրաստում:
17.	Ճանաչենք մեր հայրենիքը:
18.	Ինչ են պատմում ընտանեկան լուսանկարները:
19.	Իմ երկրի պատմության հերոսական էջերը:
20.	Արցախյան հերոսամարտի ընթացքում ծնված երգերը:
21.	Իմ սիրած երգերը:
22.	Աշխատանքը ազնվացնում է մարդուն:
23.	Ինչպես հասնել հաջողության:
24.	Դպրոց ուսումնական դարբնոց:
25.	Վատ և լավ սովորություններ:
26.	Իմ հետաքրքրություններին ու նախասիրությունները:
27.	Լավ մարդիկ ավելի շատ են:
28.	Սիրո և հավատարմության մասին:

29.	Արդարացի և անարդար արարքները:
30.	Պահպանենք մեր շրջակա միջավայրը:
31.	Ինչպես պահպանել Երկիր մոլորակը:
32.	Ինչպես պահպանել մեր հայրենիքը:
33.	Ինչ է ինձ համար դպրոցը:
34.	Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին:

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Կատարման Ժամկետը
1	Դպրոց հաճախելու կանոններ՝ համաճարակային իրավիճակից ելնելով:	դասղեկ	սեպտեմբեր
2	Կատարել լուրջ դաստիարակչական աշխատանքներ ազգային ոգով դաստիարակելու, գեղագիտական ճաշակ զարգացնելու:	դասղեկ	տարվա ընթացքում
3	Հրավիրել ծնողական ժողովներ, որտեղ ներկայացվեն աշակերտների և ծնողների հետ կատարվելիք աշխատանքները:	դասղեկ, ծնողներ	ամիսը 2 անգամ
4	Աշխատանքներ կարգապահական խնդիրներ ունեցող աշակերտների և նրանց ծնողների հետ:	դասղեկ, ծնողներ	յուրաքանչյուր ամիս

5	Այցելություններ թանգարաններ, ցուցահանդեսներ և տարիքին համապատասխան թատրոններ։	դասղեկ, աշակերտներ	մարտ, ապրիլ
6	Համագործակցել առարկայական ուսուցիչների հետ, քննարկել առաջադիմության հարցեր։	դասղեկ	տարվա ընթացքում
7	Ցուցաբերել օգնություն սոցիալապես անապահով երեխաներին։	դասղեկ, աշակերտներ	տարվա ընթացքում
8	Հաճախակի կատարել դասալսումներ։	դասղեկ	ամեն ամիս
9	Ցերեկույթի կազմակերպում և անցկացում։	դասղեկ, աշակերտներ	մայիս
10	Յուրաքանչյուր ամսվա վերջում ամփոփել առաջադիմությունը և կարգապահությունը։	դասղեկ	յուրաքանչյուր ամիս